Ընդունված է 2020 թվականի
հոկտեմբերի 13-ին

# «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պաշտպանության մասին» 2002 թվականի հոկտեմբերի 30-ի ՀՕ-11 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի «դ» կետում «զինված ուժերի» բառերից հետո լրացնել «, աշխարհազորի համակարգի» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.
«Պաշտպանության նախարարության ենթակայությամբ գործում է աշխարհազորը:»:

**Հոդված 3.** Օրենքի 5-րդ գլխի վերնագրում «ԶՈՐԱՀԱՎԱՔ» բառից հետո լրացնել «, ԱՇԽԱՐՀԱԶՈՐ» բառը:

**Հոդվածը 4.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-ին հոդվածով.

«**Հոդված 14.1. Աշխարհազորը**

1. Աշխարհազորը Արցախի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում Արցախի Հանրապետության զինված պաշտպանությանը կամավորության սկզբունքով քաղաքացիների մասնակցության համակարգ է:

2. Աշխարհազորի նպատակներն են՝

1) Արցախի Հանրապետության պաշտպանությանը համընդհանուր և համազգային բնույթ հաղորդելը.

2) հակառակորդի դիվերսիոն կամ ահաբեկչական կամ հետախուզական կամ հատուկ օպերացիաների ուժերից և այլ գործողություններից Արցախի Հանրապետության տարածքի, բնակչության և ենթակառուցվածքների պաշտպանության պլանավորված միջոցառումների իրականացմանն աջակցությունը.

3) Արցախի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի կիրառման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու տնտեսության օբյեկտների կենսագործունեության ապահովմանն աջակցությունը:

3. Աշխարհազորի կիրառումը ներառում է՝

1) մասնակցությունը Արցախի Հանրապետության սահմանների կամ հակառակորդի հետ շփման գծի վտանգված հատվածների զինված պաշտպանությանը.

2) պայքարը հակառակորդի դիվերսիոն կամ ահաբեկչական կամ հետախուզական կամ հատուկ օպերացիաների ուժերի և այլ գործողությունների դեմ.

3) մասնակցությունը հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների զինված պաշտպանությանը.

4) մասնակցությունը զորքերի և բնակչության զանգվածային տեղաշարժի կենտրոնական երթուղիների զինված պահպանությանը և պաշտպանությանը, ինժեներական կառույցների կահավորմանը.

5) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության գործընթացին:

4. Աշխարհազորի համակարգը գործում է տարածքային սկզբունքով և, ըստ Արցախի Հանրապետության վարչատարածքային բաժանման, պայմանականորեն բաղկացած է միավորումներից և դրանց ենթակա ստորաբաժանումներից: Աշխարհազորի կառուցվածքը, պատրաստության և կիրառման պլանները հաստատվում են Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով:

5. Աշխարհազորի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարը՝ Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի շտաբում ձևավորված աշխարհազորային շտաբի միջոցով:

6. Աշխարհազորային միավորման ղեկավարը (հրամանատարը) խաղաղ և պատերազմի ժամանակ համապատասխան տարածքային կառավարման մարմնի ղեկավարի տեղակալն է (Ստեփանակերտ քաղաքում՝ Ստեփանակերտի քաղաքապետի տեղակալը) կամ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից նշանակված զինվորական փորձառություն ունեցող անձը:

7. Աշխարհազորային ստորաբաժանման ղեկավարը (հրամանատարը) խաղաղ և պատերազմի ժամանակ համապատասխան համայնքի ղեկավարի տեղակալն է կամ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից նշանակված զինվորական փորձառություն ունեցող անձը:

8. Սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված՝ խաղաղ ժամանակ աշխարհազորային միավորումների և դրանց ենթակա ստորաբաժանումների ղեկավարման կարգը սահմանվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ և իրականացվում է աշխարհազորի պատրաստության ու կիրառման պլանների համաձայն:

9. Աշխարհազորային պայմանական ստորաբաժանումների համալրումն աշխարհազորայիններով (այսուհետ նաև՝ աշխարազորայինի հավաքագրում) տարածքային սկզբունքով իրականացնում են Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման տարածքային ստորաբաժանումները՝ պահեստազորում հաշվառված և պատերազմական ժամանակի հաստիքների չկցագրված քաղաքացիներից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ համապատասխան համայնքում հաշվառված քաղաքացիներից:

10. Աշխարհազորայինի հավաքագրման հիմքը նրա հետ կնքված պայմանագիրն է: Պայմանագիր չի կարող կնքվել այն քաղաքացու հետ՝

1) ով ենթակա է պարտադիր զինվորական ծառայության.

2) ով հանդիսանում է զինծառայող կամ փրկարար ծառայող կամ քրեակատարողական ծառայող կամ հարկադիր ծառայող,

3) ով պատիժ է կրում ազատազրկման կամ կալանքի ձևով, կամ ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում:

11. Հավաքագրված աշխարհազորայինների անվանացուցակները և կնքված պայմանագրերը ներկայացվում են աշխարհազորային շտաբ: Աշխարհազորայինին ամրակցվում է զենք, հատկացվում է համազգեստ և աշխարհազորայինը նշանակվում է համապատասխան պաշտոնի՝ աշխարհազորային շտաբի ղեկավարի (պետի) հրամանով: Աշխարհազորայիններին հատկացվող համազգեստի նկարագիրը և տարբերանշանները հաստատվում են Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով: Աշխարհազորայիններին զենքի ամրակցման և պահպանման կարգը, կնքվող պայմանագրի օրինակելի ձևը սահմանվում են Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ:

12. Աշխարհազորայինների պատրաստությունն իրականացվում է պատրաստության պլանների համաձայն անցկացվող պարապմունքների և վարժանքների միջոցով՝ աշխարհազորային շտաբի ղեկավարի (պետի) հրամանով: Աշխատող աշխարհազորայինների պատրաստության և կիրառման գործընթացի վրա տարածվում են Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի պահանջները: Աշխարհազորայինները պատրաստության և կիրառման ընթացքում ապահովվում են անվճար սննդով՝ զինծառայողների համար սահմանված կարգով:»:

**Հոդված 5. Եզրափակիչ մաս**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ անմիջապես:

2. Սույն օրենքից բխող իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 օրացուցային օրվա ընթացքում:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 13
Ստեփանակերտ
ՀՕ-35-Ն